ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 6 » դեկտեմբերի 2024 թվականի N:627 -Ա ք.Գյումրի

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և ՀՀ Շիրակի մարզպետի 2022 թվականի հուլիսի 27-ի «Ֆինանսական օգնության տրամադրման գործընթացն իրականացնող աշխատանքային խմբի աշխատակարգը հաստատելու մասին» N:416-Ա որոշման դրույթները, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության կողմից թվով վեց դիմումների ուսումնասիրության վերաբերյալ եզրակացությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով դիմումատու քաղաքացիներին հատկացնել 290000 /երկու հարյուր իննսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ օրենքով սահմանված կարգով ապահովել վճարումը:

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի

2024 թվականի <<6>> դեկտեմբերի-ի N627-Ա որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

N	Անուն, ազգանուն,	Հասցեն	Գումարի չափը /դրամ/
1	Կալեպսիկ Բարսեղյան	Աշոցք համայնք, Սարագյուղ բնակավայր, 3-րդ փողոց, տուն 10	30000 /երեսուն հազար/ դրամ
2	Ալմաստ Հարությունյան	Քաղաք Մարալիկ, Շիրազի փողոց, շենք 36, բնակարան 2	70000 /յոթանասուն հազար/ դրամ
3	Գոռ Մարտիրոսյան	Արթիկ համայնք, Գետափ բնակավայր, 1-ին փողոց, 5-րդ նրբանցք, տուն 6	100000 /մեկ հարյուր հազար/ դրամ
4	Վաչագան Շախբազյան	Քաղաք Գյումրի, Ղուկասյան փողոց, 16-րդ շարք, տուն 9/2	25000 /քսանհինգ հազար/ դրամ
5	Գյոզալ Շամոյան	Քաղաք Արթիկ, Սասունցի Դավիթ փողոց, շենք 21, բնակարան 19	40000 /քառասուն հազար/ դրամ
6	Ռոմելա Բաբայան	Քաղաք Գյումրի, Շիրակացի փողոց, տուն 21ա	25000 /քսանհինգ հազար/ դրամ
	Ընդամենը		290000 /երկու հարյուր իննսուն հազար/ դրամ